ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

THE HEAD OF THE GENERAL DEPARTMENT OF LOGISTIC SUPPORT OF MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
НАЧАЛЬНИК ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ МИНСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: depart@mil.am
Հեռ.՝ (+374 10) 29-43-97

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5,
E-mail: depart@mil.am
Tel.Тел. (+374 10) 29-43-97

№ ԳՏՎԿ/2776
«18» 08 202/թ.

«Արիմա գրուպ» ՍՊԸ (ՀՎՀՀ 02690834) տնօրեն
Մ. Աղաբեկյանին
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ազատության 9/3, բն. 32
էլ. հասցե՝ Arimagroupllc@gmail.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «Արիմա գրուպ» ՍՊ ընկերության միջև 02.06.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-3/2-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2021թ. 2-րդ եռամսյակի ընթացքում պետք է մատակարարեր 3 անվանում ապրանքատեսակ՝ ՀՀ զինանշան (ՀՀ ԶՈՒ զինանշան), Դրոշակաձող (Դրոշի ձող՝ տակդիրով) և Դրոշներ (ՀՀ պետական դրոշ) ապրանքատեսակները, որոնք չեն մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. օգոստոսի 18-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Արիմա գրուպ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 43 500 ՀՀ դրամ՝ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 348 000 ՀՀ դրամ՝ որպես տուժանք (պայմանագրի կատարման ապահովում) և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին ենթակա է գանձման 522 000 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում:

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ